

ոու մնացած է քաղաքական, մանաւանդ յեղա-
փոխական կուսակցութիւններէն :

Աղբ. ժողովի մէջ Օտեան առհասարակ
չէղոք մնացած է, թէեւ, մանաւանդ պատե-
րազմէն առաջ, իր մտերմական կապերը Կեդ-
րոնի Կուսակցութեան տեսակէտներուն խառ-
նած են իր քուէն : Ու համոզումներով գրեթէ
անխիստական այս մարդը՝ կեանքի մէջ առ-
հասարակ պահպանողականներուն կողմը տա-
լեց, թէեւ միշտ ըստ կարելոյն պահեց իր ան-
կախութիւնը :

Ատեն մը Օտեան նոյնիսկ Ռամկավար կու-
սակցութեան մէջ մտաւ, բայց չկրցաւ լուծը
տանիլ : Ու այնպիսի կատաղի պայքար մը մը-
ղեց, որ դիմացիներն ալ իրենց թերթին մէջ
դիմեցին աղոտա զէնքերու, հայհոյանքի :

Այդ առթիւ էր, որ խումբ մը գրողներ գա-
նազան հոսանքէ, — Օշական, Զապէլ Եսայեան,
Թէոդիկ, Զարուհի Գալէմբեարեան, Ասպետ,
Յակոբ Տէր Յակոբեան, Միք. Շամանճեան,
Շաւարշ Միսաքեան, Լեւոն Եսաճանեան, Վահ-
րամ Թաթուլ, Լեւոն Շաթրեան եւ այս տողե-
րը գրողը, — 1920 յունիս 25-ին մամուլին
յանձնեցին «Իրզովում» մը, ուր մեր գրուածքը
կը յայտնէինք երեսուն տարուան գրական
վաստակաւորի մը հանդէպ եղած անարգան-
քին դէմ :

Ռամկավարներու թերթը «պոռնիկադիր»
կոչած էր Օտեանը, շահագործելով միեւնոյն
ատեն կարգ մը հայ տէր պապաներու վլվլուկը
Օտեանի մէկ վէպին «Միջնորդ Տէր Պապա»ին
առթիւ :

Տեղն է յիշել, որ նման խաչակրութիւն
մըն ալ ծայր տուաւ Օտեանի դէմ պատերազ-
մէն առաջ, երբ Երուսաղէմի հայ վանքին գայ-
թակղութիւնը պարսաւելու ատեն առաջարկած
էր այդ վանքը ծախել, առանց դողդաղու ա-
նոր «սրբատաշ քար»երուն վրայ, որոնք վերջ
ի վերջոյ, ըսած էր, տարբերութիւն չունին
կարգ մը վայրերու մէջ դորձածուած քարե-
րէն . . .

Ազգային ժողովին մէջ Օտեան գրեթէ չէր
խօսեր : Անգամ մը միայն վէճի մտաւ երեսփո-
խան Գառնիկ Շէհրիկեանի հետ, որ ժողովին
բեմէն խնդրոյ նիւթ էր ըրեր թերթի մը մէջ իր
գրած մէկ յօդուածը : Երկուստեք անհամ բա-

ռեր փոխանակուեցան. բայց Շէհրիկեանի
Դաշնակցական ընկերներն անգամ չիւրացու-
ցին անոր յարձակումը մամուլի մէջ երեւցած
երգիծական յօդուածի մը դէմ :

Կապանքի չէր գար իր խառնուածքը :
«Ձե՞մ կարգուիր որ խառնուող չունենամ»,
— կ'ըսէր յաճախ, երբ բարեկամական խոր-
հուրդ մը տայիւր նոյնիսկ իր առողջութեանը
օգտին :

Յառնուող չէր ուզեր նաեւ հանրային
կեանքի մէջ : Ձէր հանդուրժեք, որ սրբագրու-
թիւն դալի իր մէկ գրուածքին, ինչ ալ գրած
ըլլար, եւ որ թերթին համար ալ գրած : Նոյն-
իսկ իր աշխատակցած կուսակցական թերթե-
րուն ուղղութիւնովը չէր մտահոգուիր : Պա-
տերազմէն յետոյ երբ «Ճակատամարտ»ին իսկ
կը գրէր՝ չէր կրնար մնալ կուսակցութեան
տեսակէտներու սահմանին մէջ : Օձիքէն կը
բռնէր, ուր ալ գտնէր հեղինիք բանը :

Դաշնակցական շրջանակներու մէջ իսկ
հաչտ աչքով չէին դիտեր իր աշխատակցու-
թիւնը, եւ մասնաւորաբար Պոլսոյ երկու Շըր-
ջանային ժողովի մէջ փոթորիկ յարուցուած է
իր աշխատակցութեանը դէմ, բայց միշտ ալ
տիրապետած է խմբագրութեան կարծիքը, որ
կ'ուզէր թերթին շուրջը համախմբել ոչ-գաշ-
նակցական մաքուր մտաւորականութիւնը :

Բայց, ինչպէս ըսի, Օտեան հակաեղա-
փոխական կը մնար իր խորքին մէջ՝ հերոսա-
կան դրուագներով խանդավառուելով հան-
դերձ : Եւ որովհետեւ կ'արհամարհէր Հնչակ-
եանները, աւելի Դաշնակցականներն էին որ
կ'իյնային իր խայթոցներուն տակ : (Ռամկա-
վարները բանի տեղ չէին դրուիր դեռ այն ա-
տեն ու բոլշեւիկները չկային) : Ու ինքը կը
պատմէր ինձի, թէ աքսորի մէջ ուզած է նոյն-
իսկ շահագործել իր հակադաշնակցական անց-
եալը, իր օձիքին կառող ոստիկանապետի մը
բացատրելով, թէ իր ամբողջ գրականութիւնը
Դաշնակցութեան դէմ ուղղուած է :

Բայց խորամանկ ոստիկանապետը որ կ'ե-
րեւի հայ կեանքը մեղմէ շատերէն աղէկ կը
ճանչնար, պոռայեք է երեսին .

«Տխմա՞ր կարծեցիր զիս. դուք հակադաշ-
նակցականներդ Դաշնակցութեան դէմ էք ոչ
թէ որովհետեւ ան թուրքերուն հակառակ քա-